ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

31.05.2017թ. N

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միրելի՛ երեխաներ

Ամենաջերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ այս գեղեցիկ տոնի՝ Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ:

Ցանկանում եմ, որ Ձեր ժպտադեմ հայացքներից երբեք չպակասեն մանկական անհոգությունն ու շրջապատված լինեք միմիայն դրական զգացողություններով:

Թո՛ղ որ, մշտապես իրականություն դառնան Ձեր ամենաբարի նպատակներն ու երազանքները և Ձեր մանկությունն ընթանա խաղաղության ու բարության մթնոլորտում:

Դուք մեր հայրենիքի վաղվա քաղաքացիներն եք և վստահ եղեք, որ մեր երկրում արվում է առավելագույնը Ձեր ապագան լավագույնս կերտելու, մրցունակ գիտելիքներով և պատշաճ դաստիարակությամբ օժտված նորօրյա սերունդ ձևավորելու համար:

Թանկագի՛ն երեխաներ

Կրկին շնորհավորում եմ տոնական օրվա կապակցությանբ և բարեմաղթում, որ Ձեզ մշտապես ուղեկցեն առողջությունը, հաջողություններն ու երջանկությունը՝ բերկրանքի բազում պահեր պարգևելով ցորաքանչյուրիդ:

Հարգանքով՝

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ